



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2935



5985

Ե Լ Կ Ո Պ Ի Բ

ՉՄԵՌԱՅԻՆ ՀԵՔԵԱԹ


№ 1.

Համառոտքիս

ՄԵՐԻ ԵՒ ՉՍՐԸ ԼԱՄԲԻ

Թարգմ.

Ֆար. Նահապետեանց



ԹԻՖԼԻՍ, 1904 թ.

Տպարան «ՀԵՐՄԷՍ», Մաղաթեան փողոց, № 15.

(54)

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ОБЩЕСТВЕННЫХ
НАУК
СССР

82
Շ-53

21
5976

23 JUN 2005
20 OCT 2009

Շ Ե Կ Ս Պ Ի Բ

ԶՄԵՌԱՅԻՆ ՀԵՔԵԱԹ

№ 1.


Հանդես

ՄԵՐԻ ԵՒ ԶԱՐԿ ԼԱՄԻ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОРИКО-ЯЗЫКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Թարգմ.

Յար. Նահապետանց



ԹԻՖԼԻԶ 1904

Տպարան «ՀԵՐՄԵՆ» Մաղար. փող., 15.
(54)

15.07.2013

2935

Дозволено цензурою. Тифлисъ, 22 Сентября 1904 г.



56875-66

* *
*

Այժի առաջ ունենարով այն հանգա-
մանը, որ Շեկապիրը անծանօթ է մնում
մեզ շատերիս շնորհիւ այն բանի, որ նրա
ոչ բոլոր հեղինակութիւններն են քարգմա-
նուած հայերէն եւ, երէ քարգմանուած էլ
կան, մասշէլի չեն գների քարձութեան
պատահողով, մենք նպատակալարմար հա-
մարեցինք քարգմանել Մերի եւ Չարլզ Կամ-
բի համասօսութեան ռուսերէն քարգմանու-
թիւնից նրա հեղինակութիւնները եւ հրա-
սարակել առանձին գրոյկներով, որոնք մաս-
շէլի կ'լինեն իւրաքանչիւրիս:

Թարգմ.

ՉՄԵՌԱՅԻՆ ՀԵՔԵԱԹ

Սիցիլիայի թագաւոր Լէօնտը և նրա
կին, գեղեցիկ և բարեգործ էրմոնը, ապ-
րոււմ էին միասին մեծ համաձայնութեամբ:
Լէօնտը այնպէս երջանիկ էր զգուժ իրեն
գէպի իւր կինն ունեցած սիրոյ մէջ, որ կա-
մենուժ էր միայն մի բան. տեսնուել իւր
վաղեմի դասարանական ընկեր Պալիկսէնի
հետ, որ Բոհեմիայի թագաւորն էր, և ծա-
նօթացնել նրան իւր կնոջը: Լէօնտը և Պա-
լիկսէնը հենց մանկութիւնից դաստիարակ-
ոււմ էին միասին, բայց, իւրեանց հօր մա-
հուանից յետոյ, կանչուելով կառավարելու
իրենց թագաւորութիւնները, նրանք արդէն
մի քանի տարի էր որ չէին տեսնուել իրար
հետ, թէպէտ յաճախ փոխանակոււմ էին նա-
մակներով և պէս պէս ընծաներով: Վերջա-
պէս, յաճախ կրկնուող հրաւիրումներից յե-

տոյ, Պալիկսէնը Բոհեմիայից եկաւ Սիցիլիայ
այցելելու իւր ընկեր Լէօնտին:

Սկզբում այս այցը մեծ բաւականու-
թիւն պատճառեց Լէօնտին: Նա խնդրեց իւր
կնոջը ցոյց տալ Պալիկսէնին որքան կարելի
է սիրալիր ընդունելութիւն և, թուում էր,
թէ հին ընկերոջ ներկայութիւնը նրան հաս-
ցրեց փառքի գագաթնակէտին: Նրանք յի-
շում էին անցեալը մտաբերում էին աչա-
կերտական օրերը և տղայական շարութիւն-
ները և պատմում էին Էրմոնին, որ մեծ
մասնակցութիւն էր ցոյց տալիս խօսակցու-
թեանց մէջ: Հիւրելով բաւականին երկար,
Պալիկսէնը պատրաստուեց ճանապարհու-
ելու: Լէօնտը խնդրեց մի քանի օր ևս մնալ
և Էրմոնն էլ ամուսնու ցանկութեամբ միա-
ցաւ նրա խնդիրներին: Հենց այստեղ սկը-
սուեց յարգելի թագուհու գծրախտութիւ-
նը: Պալիկսէնը, մերժելով Լէօնտի խնդիրը,
զիջեց Էրմոնի թախանձանքներին և յետա-
ձգեց իւր ելքը մի քանի շաբաթով: Ահա
այս եղաւ պատճառ այն անբացատրելի կաս-
կածի, որ յանկարծ պատեց Լէօնտին, թէ-
պէս նա հաստատ համոզուած էր Պալիկս-

նի ազնուութեանը և իւր կնոջ հաւատարմու-
թեանը: Էրմոնի սիրալիր վերաբերմունքը
դէպի Պալիկսէնը, որ բղիւմ էր միայն գէ-
պի ամուսինն ունեցած համակրութիւնից,
ստիպում էր անբախտ Լէօնտին շարաչար
տանջուել: Սիրող, հաւատարիմ ընկերից և
քնքոյշ ամուսնուց, Լէօնտը դարձաւ մի ահ-
ռելի գազան: Նա մի օր կանչեց իւր պա-
լատականներից Վամիլլին և, յայտնելով նը-
րան իւր կասկածները, հրամայեց թունա-
ւորել Պալիկսէնին:

Վամիլլը մի շատ բարի մարդ էր, նա
չատ լաւ գիտէր, որ Լէօնտի կասկածը զուրկ
էր հիմունքից, և այդ պատճառով փոխա-
նակ թունաւորելու Պալիկսէնին, նա յայտ-
նեց նրան իւր տիրոջ հրամանը և խորհուրդ
տուեց փախչել միտին Սիցիլիայից: Պալիկ-
սէնը, Վամիլլի օգնութեամբ, անվտանգ հա-
սաւ Բոհեմիայ և Վամիլլը այն օրից տեղա-
ւորուեց Պալիկսէնի պալատում և դարձաւ
նրա առաջին և հաւատարիմ բարեկամը: Պա-
լիկսէնի փախուստը աւելի ևս գրգռեց Լէ-
օնտին, բարկութեամբ ընկաւ նա թագուհու
սենեակը և գտաւ նրան նստած իւր փոքրիկ

Մամիլլ օրդու հետ, որ զբաղեցնում էր մօս
րը հեքեաթներով, մաներով, թագաւորը
վերջրեց նրանից օրդուն, իսկ իրեն ուղար-
կեց բանդ: Մամիլլը, չնայած իւր փոքրու-
թեանը, շատ էր սիրում մօրը, և լուրը, թէ
մայրը ճգուած է բանդ և ընդմիջտ բաժա-
նուած է իրանից, այնպէս սաստիկ տրտմեց-
րեց նրան, որ խեղճ էրեխան, նուազուելով
և քայքայուելով, կորցրեց քունն ու փտո-
ժակը, և շատերը ակամայից մտածում էին
որ նա անզօր կ'լինի այդ բանը տանելու:
Թագաւորը, ուղարկելով թագուհուն բանդ,
հրամայեց երկու մեծանձն Սիցիլիացիների՝
Կլէօմէնին և Իփօնին, գնալ Իելֆ, Ապօլլօնի
տաճարը, և հարցնել պատգամախօսին. մե-
զմուր էր թագուհին, թէ ոչ: Բանդարգե-
լութիւնից մի քանի օր անց, էրմօնը մի աղ-
ջիկ ծնեց, խեղճ կինը շատ էր ուրախանում,
նայելով նորածնի վրայ, և ասում էր նրան.
«Խեղճ փոքրիկ գերի, ես նոյնքան անմեղ
եմ, որքան և դու»:

Էրմօնը մի ընկերուհի ունէր, Պատուինայ,
անունով, որ Սիցիլիայի աղնուական Անտի-
գոնի կինն էր: Պատուինան, իմանալով, որ

իւր տիրուհին ազատուել է ծննդկանութիւ-
նից, գնաց բանդ և ասաց Էմիլլիային, որ իննս-
մում էր թագուհուն. «Էմիլլիայ, խնդրում
եմ, յայտնեցէք բարի թագուհուն, որ, եթէ
նա հաւատում է ինձ իւր երեխային, ես կը
տանեմ նրան թագաւորին, նրա հօրը, և ո՛վ
գիտէ, կարելի է թէ թագաւորը մեղմանայ
տեանելով անմեղ մանուկին»... «Գերապատիւ
տիրուհի», պատասխանեց Էմիլլիան, «ես կը
յայտնեմ թագուհուն ձեր բարի առաջարկը,
նա ինքը մօտ օրերս յայտնում էր ցանկու-
թիւն, որ մէկը իւր բարեկամուհիներից երե-
խային վճռէր ցոյց տալ թագաւորին»: «Ձը
մտաւեաք նոյնպէս անել նրան», շարունակեց
Պատուինան, «որ ես, չվախենալով ոչնչից,
պէտք է խօսեմ նրա օգտին Լէօնտի առաջ»:
«Թող Տէրը վարձատրէ», պատասխանեց Է-
միլլիան, «ձեր դէպի մեր թագուհին ունե-
ցած բարեարտութեան համար»: Էրմօնը լը-
սելով Էմիլլիայից Պատուինայի բարի առա-
ջարկը, ուրախութեամբ հաւատաց նրան իւր
երեխային, որովհետեւ համարեաւ բոլորովին
կորցրել էր յօյսը, թէ որ և է մէկը կ'համարձա-
կուի ներկայացնել նրան հօրը... Պատուինայի

ամուսինը, վախենալով թագաւորական բարկութիւնից, չէր թողնում կնոջը պալատն որը սակայն, չնայած նրա արգելումներին, գտաւ այնտեղ մուտք և, դնելով երեխային Լէօնտի ոտներին մօտ, մի գեղեցիկ ճառարտասանեց ի պաշտպանութիւն էրմոնի՝ Նախատելով անմարդավայել և գազանաբարոյ վարմունքի համար, ի վերջոյ նա խընդրեց խղճալ իւր անմեղ կնոջ և անբաղդ երեխային... Բայց նրա քաջարի ճառը միայն աւելացրեց Լէօնտի բարկութիւնը։ Նա հրամայեց Անտիգոնին հեռացնել Պատլինային իւր աքճերից։ Հեռանալով, Պատլինան թողեց երեխային հօր ոտների մօտ։ Նա մտածում էր, թէ Լէօնտը, տեսնելով նրա անմեղութիւնը, կխղճայ նրա վրայ Բարի Պատլինան սխալուեց, որովհետև, հազիւ էր նա հեռացել պալատից, երբ անխիղճ հայրը հրամայեց Անտիգոնին, վերցնել երեխային, նստել նաև, որ պատրաստ էր այդ ժամանակ ճանապարհուելու, և ձգել նրան մի որ և է անմարդաբնակ ծովափ։ Անտիգոնը նման չէր բարի Կամիլլին և մեծ ջանքով էր կատարում Լէօնտի հրամանները, չյոկելով լաւը

վատից։ Անյապաղ նստեց նա երեխայի հետ նաև, և առանց շարժուեց, որպէսզի առաջի պատահած անմարդաբնակ ափը ձգէ նրան։ Թագաւորը այնպէս խիստ էր համոզուած էրմոնի մեղաւորութեանը, որ չսպասելով Կլէօմէնի և Դիօնի վերադարձին, որոնք ուղարկուած էին Դելֆեան պատգամախօսի մօտ խորհրդակցութեան, ենթարկեց նրան հասարակական դատասանի, որ կազմուած էր ազնուականներից և պալատականներից։ Երբ բոլոր ազնուականները, դատաւորները և պալատականները հաւաքուեցին դատելու անբախտ թագուհուն, որ կանգնած էր իւր հպատակների առաջ, իբր մեղապարտ, սպասելով իւր վիճակի որոշմանը, Կլէօմէնը և Դիօնը մտան խորհրդարան և ներկայացրին թագաւորին պատգամախօսի կնքուած նամակը։ Լէօնտը հրամայեց բանալ նամակը և ընդհանուրի ներկայութեանը կարգալ ձերմոնը անմեղ է, — Պալիկէնը անարատ, — Կամիլլը հաւատարիմ հպատակ է, — Լէօնտը կասկածող բռնաւոր, և մինչև որ չգտնուի կորածը, չի ունենայ նա թագաժառանգութեանը։ Թագաւորը չհաւատաց պատգամախօսի խօս-

քերին: նա ասում էր: որ դա խաբեքայու-
թիւն է, թագուհու բարեկամներից մտա-
ծոնած, և հրամայեց սկսուած գատը շա-
րունակել ըստ կարգի: Բայց մինչդեռ Լէօն-
տը խօսում էր այսպէս, ներս մտաւ մի պա-
լատական և յայտնեց, որ արքայորդի Մա-
միլը յանկարծամահ է եղել: Վիշտը և ա-
մօթը, թէ պէտք է մօրը դատեն, սպանե-
ցին խեղճ տղային: Երմօնը, լսելով որդու
մահուան լուրը, ուշաթափուեց: Լէօնտը,
այս անսպասելի պատահարներից խոցողուե-
լով, ի սրտէ կարեկցութիւն զգաց դէպի
անբախտ կինը: նա հրամայեց Պատւինային
և մի քանի ազնուատոհմ իշխանուհիներին,
որ տանեն թագուհուն իւր սենեակը և աշ-
խատեն ուշքի բերել, Բայց արդէն ուշ էր...
Պատւինան շնորով վերադարձաւ և յայտնեց
թագաւորին, որ Երմօնը մեռած է:

Լէօնտը, լսելով թագուհու մահուան
լուրը, զզջաց նրա հետ այնպէս խիստ վա-
րուելու համար: նա տեսաւ, որ իւր վատ
վերաբերմունքը դէպի նա կոտորեց նրա սիր-
տը, և այժմս միայն հաւատում էր նրա ան-
մեղութեանը, այժմս նա համոզուեց, որ

պատգամախօսը չէր խաբոււ: նա պատրաստ
էր զոհել իւր ամբողջ թագաւորութիւնը,
միայն թէ կարողանար վերադարձնել իւր
կորցրած դուստրը, որովհետև նա այլևս չէր
տարակուսում պատգամախօսի խօսքերին:—
Թէ՛ լեթէ այն, ինչ որ կորած է, չգտնուի,
նա չի ունենայ թագաժառանգ: Խղճի խայ-
թը սկսեց Լէօնտին տանջել և, դրանից յե-
տոյ, շատ տարիներ նա անցկացրեց մտա-
տանջութեան մէջ: Նաւը, որով Անտիգոնը
տարաւ փոքրիկ արքայադստրին, փոթորկից
քշուեց Բոհեմիայի ափերը, հենց այն թա-
գաւորութեան, որը կառավարոււմ էր բարի
Պալիկօէնը:

Անտիգոնը նաւից դուրս եկաւ ցամաք
և թողեց այնտեղ խեղճ մանուկին, Իսկ ին-
քը այլևս բոլորովին չվերադարձաւ Սիցիլիայ,
պատմելու Լէօնտին, թէ ուր ձգեց պղկանը,
որովհետև հայրենիք վերադառնալիս, մինչ
կնստէր նաւ, նրան պատառտեց մի արջ,
որի մէջ կարելի է տեսնել նախախնամու-
թեան արդարացի պատիժը Լէօնտի չար
հրամանները եռանդով կատարելու համար:
Թողնուած արքայադստրը բալուղուած


էր թանկագին սպաստաներով, որոնք ծածկուած էին հազուագիւտ քարերով, որովհետեւ էրմոնը, ուղարկելով իր աղջկանը Պատլինայի ձեռք Վէօնտին, աշխատել էր որքան կարելի է լաւ զարդարել: Անտիգոնը ստրացրեց բարուլի վրայ մի տոմս, որտեղ դժբախտ երեխային անուանում էր Պերդիտայ, և մութ խօսքերով ակնարկում էր նրա բարձր ծագումը և անբախտ վիճակը... Ինչ որ հովիւ գտաւ այս խեղճ անբախտ երեխային և, իբրև բարի մարդ, տարաւ իւր կնոջը, որը սկսեց խնամել նրան մեծ հոգատարութեամբ: Խեղճ հովիւը մոլորուեց ինչ անէր գանձը: Վերջապէս նա թագցրեց իւր հարուստ գիւտը, և, որպէսզի ոչ ոք չիմանայ թէ որտեղից է հարստութիւնը, թողեց իւր բնակավայրը: Պերդիտի հարստութեան մի մասով գնեց մի հօտ ոչխար և այնպիսով հարուստ հովիւ դարձաւ: Պերդիտան իրեն համարում էր հովուի դուստր և, իսկապէս էլ, նա կրթում էր հովուի դասեր պատշաճ կրթութեամբ: Սրբ փոքրիկ Պերդիտը մեծացաւ, նա դարձաւ մի շատ գեղեցիկ և խելացի աղջիկ, և թեպէտ ստացել էր ամե-

նահասարակ կրթութիւն, պատշաճ հովուի դասեր, բայց թագաւորական վայելչութիւնը, որ նա ժառանգել էր իւր անբախտ մօրեց, այնպէս խիստ էր արտայայտուում նրա շարժմանց մէջ, որ շնայելով նրա խեղճուկ կրթութեանը, նրան նայելիս, իւրաքանչիւր մարդու մէջ հարց էր ծագում, արդեօք պալատում չէ կրթուել սա:

Բոհեմիայի թագաւոր Պալիկասը մի որդի ունէր Փլօրիդեր անունով: Մի անգամ այս երիտասարդ տղան, հովուի բնակարանի մօտ որսորդութեամբ պարսպելիս, տեսաւ նրա կարծեցեալ դասերը: Պերդիտի գեղեցկութիւնը, համեմատութիւնը և թագաւորական ձևերը այնպէս խօշոր ազդեցին նրա վրայ, որ լոպէտապէս սիրահարուեց, սա էլ հասցրեց այն բանին, որ Փլօրիդելը հօրիկը անուան տակ և մասնաւոր մարդու հազուասով շուտով հիւր դարձաւ ծեր հովուի տանը: Փլօրիդելի յաճախակի բացակայութիւնը անհանգստացրեց թագաւորին: Նա հրամայեց հետևել նրան և այստեղ յայտնուեց, որ նրա որդին սիրում է հովուի դասերը:

Անյապաղ, Պարիկսէնը կանչեց հաւատա-
րիմ Կամիլլին, որ փրկել էր նրա կեանքը
Լէօնտի կատաղութիւնից, և խնդրեց նրան
գնալ իր հետ, Պերդիտի կարծեցեալ հօր,
հօփուի տունը: Պարիկսէնը և Կամիլլը, եր-
կուսն էլ հագուստները փոխած, ժամեցան
ծեր հօփուի բնակարանին հէնց այն ժամա-
նակ, երբ այնտեղ կատարում էին ոչխարներ
խուղելու հանդէսը: Նրանց հրաւիրեցին ներս
մասնակցելու ընդհանուր ուրախութեան, ու-
րովհետև այս տօնի օրը իւրաքանչիւր հիւր,
նոյն իսկ անծանօթ, ընդունւում էր ուրա-
խութեամբ... Խնդութիւնն ու ուրախութիւ-
նը թագաւորում էին բնակարանում: Մի
քանիսը նորահարսերից և օրիորդներից պա-
րում էին տան առաջ մարդի վրայ, մինչդեռ
միւսները շրջափաճառից գնում էին երեզ-
ներ, ձեռնոյններ և այդպիսի դատարկ իրեր:
Ուշադրութիւն չդարձնելով այս ազմկող ամ-
բօխին, Պերդիտը և Փլօրիդելը հանդարտ
նստած էին մի հեռաւոր անկիւնում և,
թւում էր, թէ այնպէս զբաղուած էին իւր-
եանց խօսակցութեամբ, որ չէին հետաքր-
քրւում շրջապատող ուրախութեամբ: Թա-

գաւորը այնպէս յաջող էր փոխել հագուս-
տը, որ նոյնիսկ օրդին չէր ճանաչի նրան,
այդ պատճառով նա աներկիւղ մտեցաւ ե-
րիտասարդներին և սկսեց ունկնդիր լինել
նրանց խօսակցութեան: Գիտելով Պերդիտին,
նա ապշեց նրա պարզ, բայց դուրեկան շարժ-
մունքներից: «Սա դեղեցկագոյնն է գիւղա-
կան օրիորդներից, որին ես երբ և իցէ տե-
սել եմ», ասաց նա Կամիլլին: «Նրա խօսքե-
րից և շարժմունքներից երևում է, որ նա
բարձր է իւր ծագումից և, նրան նայելիս,
հազիւ թէ մէկը գիւղացի համարի նրան»:
«Իսկապէս», ասաց Կամիլլը, «նա, առանց տա-
րակուսանքի, կարող է համարուել արքայա-
դուստր»... «Խնդրում եմ, բարեկամ», դար-
ձաւ թագաւորը ծեր հօփուին, «ասացէք ինձ
այն երիտասարդի անունը, որ խօսում է ձեր
դասեր հետ»: «Նրան կանչում են Գօրիկը»,
պատասխանեց հօփիւրը, «նա սիրում է իմ աղ-
ջրկան, սակայն նրանք երկուսն էլ սիրում են
միմեանց: Ամուսնանալով իմ աղջկայ հետ,
ես համոզուած եմ, որ նա չի զղջայ. երի-
տասարդ կիներ նրան կրեքէ մի այնպիսի օ-
ժիտ, որպիսին նա չէր տեսնում», այս ա-



սելով ծերուկը աչքի առաջ ունէր Պերդիտի հարստութեան մնացորդը, որ խնամքով պահել էր հարսանեաց համար: Ապա Պալիկսէնը դարձաւ դէպի որդին. «Ես գարմանում եմ, երիտասարդ», ասաց նա նրան, «որ դուք չէք մասնակցում այս ուրախ տօնին, ինձ թւում է, որ ձեզ խանդարում է սիրոյ զգացմունքը դէպի այդ աղջիկը, որը պատել է ձեր ամբողջ էութիւնը, այս այսպէս լինելով հանդերձ, յամենայն դէպս, ինձ անբացատրելի է մնում ձեր վարմունքը. «Երբ ես երիտասարդ էի, սիրում էի ընծաներ գնել սիրած օրիորդիս համար, իսկ դուք չըջավաճառին թոյլ տուիք գնալ առանց որ և է բան գնելու ձեր գեղեցկուհու համար»:

Երիտասարդ արքայօրդին, չ'գիտենալով ոչ իւր հետ խօսողը իւր սեփական հայրն է, պատասխանեց. «Թարգելի ծերուկ, իմ գեղեցկուհին չի սիրում այդպիսի դատարկ բաներ, Պերդիտի ինձանից սպասած պարգևները իմ սրտումս են... Պերդիտայ, այս յարգելի ծերուկի առաջ, որը, ինչպէս ես տեսնում եմ, նոյնպէս սիրել է երիտասարդ

ժամանակ, ես կասեմ իմ խոստումները... թող նա վկայ լինի մեր նշանադրութեան»:

«Ո՛չ, երիտասարդ պարոն, ես ձեր բաժանման վկան կլինեմ», ասաց թագաւորը, հանելով ծածկող հագուստը. մնալով թագաւորական հագուստի մէջ, նա սկսեց նախատել որդուն անմիտ ցանկութեան համար, որ նա կամենում է ամուսնանալ դիւզացի աղջկայ հետ. Պերդիտին նա խիստ սաստեց և երդուեց մահով պատժել, եթէ մի անգամ էլ տեսնուի իւր որդու հետ: Կատաղած թագաւորը դուրս եկաւ հովուի տանից, հրամայելով հետևել իրեն սրդուն և կամիլին: Ի սրտէ վիրաւորուած թագաւորի նախատումներից և հայհոյանքներից, Պերդիտը, նորա գնալուց յետոյ, ազատութիւն տուեց իրեն ճնշող զգացմունքներին, «իմ յոյսերը խորտակուած են», ասում էր նա, «բայց չկարծէք, թէ ինձ կուրացրեց թագաւորի տեղը և կամ նրա սպառնալիքները վախեցրին ինձ... մի քանի անգամ ես պատրաստուում էի ասել նրան, որ նրա պալատը լուսաւորող արեգակը

չի մոռանում և մեր համեստ խրճիթը և որ նա հաւասարապէս փայլում է երկուսի վրայ էլ: Ապա, դառնալով Փլօրիզելին, ասաց. «Թողէք ինձ, արքայորդի, գեղեցիկ երազը վերջացաւ, ես չեմ կամենում շարունակել նրան, ես կգնամ հետևելու իմ ոչխարներին և ողբալու...»

Բարեհոգի Կամիլը ապշած էր Պերդիտի արժանաւորութեամբ, նա նկատեց, որ երիտասարդ արքայորդին այնպիսի ջերմ սիրով է սիրում նրան, որ թագաւորի հրամանը ոչ մի դէպքում չի կարող թուլացնել արքայորդու սէրը դէպի Պերդիտը, այդ պատճառով Կամիլը միջոց էր մտածում սիրահարներին նորից միացնելու և միևնոյն ժամանակ իրագործելու իւր մտածածը, որ արդէն երկար ժամանակ պտտւում էր նրա մտքում:

Կամիլը գիտէր, որ Լէօնաը արդէն բնութրովին փոխուել է, կասկածը և կատաղութիւնը, որ այնքան անբախտութեան պատճառ դարձան, թողեցին նրան ընդմիջու: Այդ պատճառով Կամիլը, Պալիկսէնին հաւատարիմ մնալով հանդերձ, աստիկ ցանկութիւն ունէր տեսնելու իւր հայրենիքը

և վաղեմի տիրոջը: Նա առաջարկեց Փլօրիզելին Պերդիտի հետ միասին գնալ իւր հետ Սիցելիայ և այնտեղ մնալ Լէօնտի հովանաւորութեան տակ, մինչև որ, Կամիլի միջնորդութեամբ, նրանք Պալիկսէնից կատանան ներուժն և թոյլտուութիւն պահուելու:

Փլօրիզելը և Պերդիտը ուրախութեամբ ընդունեցին նրա առաջարկը, և Կամիլը, պատրաստուելով փախստեան համար, հովուին էլ հրաւիրեց ճանապարհուել իրենց հետ: Հովիւը իւր հետ վերցրեց Պերդիտի հարստութեան մնացորդը, նրա մանկական հագուստը, նոյնպէս և տոմսը, որը ամրացրած էր նրա վրայ:

Երկար նաւագնացութիւնից յետոյ, նրանք յաջողութեամբ հասան Լէօնտի պալատը: (Լէօնտը դեռ տանջւում էր իւր թանկագին էրմոնի և կորցրած դստեր համար): Նա դիմաւորեց Կամիլին և Փլօրիզելին մեծ պատուով և ուրախ Պերդիտը, որ ներկայացրուած էր իբր հարսնացու Փլօրիզելի, թուում էր, թէ գրաւեց թագաւորի ամբողջ ուշադրութիւնը: Նրա նմանութիւնը

մեռած թագուհու հետ նորոգեց նրա մէջ նախկին տանջանքները: «Ահա», ասում էր նա, «ես էլ մի այսպիսի աղջիկ կունենայի, եթէ ես ինքս այնպէս խիստ չվարուէի նրա հետ: Համարեա հենց այս ժամանակ», շարունակեց նա, Ֆլորիդելին դառնալով, «ես զրկուեցի ձեր արժանաւոր հօր բարեկամութիւնից, որի վերադարձման համար պատրաստ եմ այժմն ամբողջ կեանքս զոհել»: Ծեր հովիւը, տեսնելով թագաւորի հետաքրքրութիւնը, և լսելով այն բանի մասին, որ Աֆօնտի աղջիկը թողուած է եղել մի ինչ որ տեղ ծովափուս, ակամայից մասսուսուեց: Վերայիշելով ժամանակը, երբ նա գտաւ աղջկանը, նրա թանկագին շորերը և նրա միւս բարձր ծագման նշանները, նա, վերջապէս, որոշեց որ կորցուած արքայազուստը և Պերդիտը—միևնոյն անձնաւորութիւնը պէտք է լինեն... Պերդիտի, Ֆլորիդելի, Կամիլլի և հաւատարիմ Պաուլինայի ներկայութեամբ, նա յայտնեց թագաւորին իւր եզրակացութիւնները կորցրուած արքայազուստի վերաբերմամբ: Նա պատմեց, ինչպէս է գտել մանկանը, թէ

ինչպէս արջը պատառել է Անաիդոնին, (նա այս բանը տեսել էր անտառից); ցոյց տուեց բալուլի թանկագին պատառները, չթագցրեց նոյնպէս միւս թանկագին զարդերը, որ էրմոնը ձգել էր Պերդիտի պարանոցը, և տուեց տոմսի հետ, որ գրել էր Պաուլինայի ամուսինը: Պաուլինան իսկոյն ճանաչեց ամուսնու ձեռագիրը, ինչպէս և ընդունեցին, որ իսկապէս ծերունի հովուի ցոյց տուած հագուստները և զարդերը, նոյն հագուստներն և զարդերն են, որոնցով հանգուցեալ թագուհին զարդարել էր իւր մանկանը: Այսպիսի ասպացոյցներից յետոյ ոչ մի կասկած չէր կարող լինել, որ Պերդիտը Աֆօնտի դուստրն է:

Իժուար է երեւակայել, թէ ինչպէս մեծ էր թշուառ Պաուլինայի զգացմունքների ազնիւ կռիւը՝ ամուսնու մահուան տխուր լուրի և ուրախալի—օրակուլի խօսքերի կտարման միջոցին, որովհետև կորցրուածը դտնուած էր: Աֆօնտը այլևս չէր կասկածում, որ Պերդիտը իւր դուստրն է, բայց այն, որ էրմոնը չէր կարող այլևս տեսնել իւր դստերը, նսեմացնում էր նրա ուրա-

խութիւնը: «Ախ, եթէ քո մայրը, քո... մայրը», ասում էր, յուզուած, չկարողանալով այլևս շարունակել: Պատւիրնան, կամենալով վերջ դնել այս տխուր տեսարանին, որ տեղին չէր բոլորի համար նոր սկսուած ուրախութեան միջոցին, ասաց Լէօնտին, որ ինքը մի անգրի ունի, վերջերս պատրաստուած յայտնի իտալական անդրիագործ Ջուլիօ Բօմանոյի ձեռքով, որ այնպիսի զարմանալի նմանութիւն ունի թագուհու հետ, որ, եթէ նրա մեծութիւնը բարեհաճէ գընալ իրեն մօտ՝ տուն և նայէ այդ անդրին, նա անպատճառ կը կարծէ, թէ կենդանի էրմոնն է: Առաջարկը իսկոյն ընդունուեց: Թէ թագաւորը և թէ Պերդիտը շտապեցին տեսնել արձանը: Լէօնտը—անդրիի նմանութիւնը էրմոնի հետ հաւատարու նպատակով, իսկ Պերդիտը—իւր շտեւած մօր տեսնելու շերմ ցանկութեամբ: Պատւիրնան բարձրացրեց վարագոյրը, բոլորը տեսան անդրին, որի նմանութիւնը էրմոնի հետ աներևակայելի էր: Նրա տեսքից, թագաւորի վիշտը վերանորոգուեց և նա երկար ժամանակ ոչ մի բառ չէր կա-

ջողանում արտասանել: «Ինձ դուր է գալիս ձեր լուսթիւնը, տէր իմ», ասաց Պատւիրնան, ընա բառերից աւելի է արտայայտում ձեր զարմանքը, արդեօք ճիշտ չէ, որ անդրին նման է ձեր հանգուցեալ կնոջը: «Այո», ասաց թագաւորը, ծանր լուսթիւնից յետոյ, «սա նա է, սրա մէջ նկատուում է նոյն վեհութիւնը, որ երևում էր էրմոնի մէջ մեր առաջին տեսակցութեան միջոցին, երբ ես այնպէս ջերմ սիրեցի նրան... Բայց, սակայն, Պատւիրնայ, էրմոնը այս անգրիից փոքր էր»: «Հենց այդտեղ է արտայայտուում անդրիագործի շնորհքը. նա քանդակել է նրան այնպէս, ինչպէս նա կլինէր այժմս, եթէ կենդանի լինէր...», բայց թոյլ տուէք ինձ իջեցնեմ վարագոյրը, ապա թէ ոչ, թերևս, կը կարծէք, թէ անդրին շարժուում է»... «Մի իջեցնէք...», սպասեցէք...», սպասեցէք», ասաց թագաւորը, «ախ, եթէ կարողանայի մեռնել, նայիր, Կամիլլօ, նայիր, քեզ չի թւում, թէ անդրին շնչում է, թէ նրա աչքերը շարժուում են»: «Ես կիջեցնեմ վարագոյրը, ձերդ մեծութիւն», ասաց Պատու-

լինան, «դուք այնպէս հրապուրուած էք, որ շուտով կսկսէք մտածել, թէ նա իսկապէս կենդանի է»: «Ո՛հ, բարի Պաուլինայ, այդ հրապոյրը, այդ խաբէութիւնը թող շարունակուի, թէկուզ քսան տարի... այո՛, այո՛...», ինձ թւում է, թէ նա շնչում է... մի՞թէ շունչ էլ կարող է տալ անդրիադորժը, մի ծաղրէք ինձ, եթէ ես համբուրեմ նրան»: «Ո՛ ոչ, ի սէր Աստուծոյ», ասաց Պաուլինան, «չրթունքների ներկերը չորացած չեն և դուք կներկուէք նրանցից... ես աւելի լաւ է իջեցնեմ վարագոյրը»: «Ո՛չ այժմս, այլ քսան տարուց յետոյ», ասաց Լէօնտը: «Ես էլ կմնամ այստեղ, իմ անդին մօրս նայելու», ասաց Պերդիտը, որ մինչ այդ ծընկաչոք կանգնած, լուռ զարմանքով, նայում էր մօրը...: «Սթափուեցէք, արքայ, ուշքի եկէք, թողէք իջեցնեմ վարագոյրը... կամ թէ պատրաստուեցէք տեսնել նոր հըրաչք», ասաց Պաուլինան Լէօնտին, «ես այնպէս կարող եմ անել, որ անդրին իսկապէս կչարժուի, կիջնի պատուանդանից և, նոյնիսկ, կբռնի ձեր ձեռքը, սակայն չը կարծէք, թէ ես այդ բանի համար կըդի-

մեմ չար ոգու օգնութեան»: «Ստիպիր նրան անելու ինչ որ կամենում ես, ես կուրախանամ, ուրախ կլինեմ ամեն մի բանի, բայց, եթէ դու նրան խօսեցնես, ո՛, այն ժամանակ իմ ուրախութեանը սահման չի լինի»: Այն ժամանակ Պաուլինան հրամայեց նուազել մի գեղեցիկ մեղեդի, որ դիտմամբ պատրաստուած էր այդ դէպքի համար. ի զարմանս բոլոր հանդիսատեսների անդրին ցած եկաւ պատուանդանից և ձեռներով փարուեց Լէօնտի պարանոցը, ապա սկսեց խօսել, կանչելով Աստուծոյ օրհնութիւնը իւր ամուսնու և գտնուած դրստեր՝ Պերդիտի վրայ: Զարմանալու չէ, որ անդրին փարւում և օրհնում էր թագաւորին և իւր գօտերը...», այո՛, չպէտք է զարմանալ, որովհետև անդրին հենց ինքը թագուհին էր, իսկական, կենդանի: Պաուլինան, իւր ախրուհու կեանքը ազատելու նըպատակով, խաբեց թագաւորին, յայտնելով նրան, թէ էրմոնը մեռել է: Եւ այս բոլոր ժամանակը էրմոնը ապրում էր բարի Պաուլինի մօտ չհամարձակուելով յայտնել Լէօնտին իւր գոյութեան մասին, մինչև որ չը-

լի, թէ Պերդիտը կենդանի է: Բանը նը-
րանումն էր, որ թագուհին, թէպէտ կա-
րող էր ներել Լէօնտին բոլոր իրեն արած
անգթութեանց համար, բայց նրա խստու-
թիւնը իւր դստեր վերաբերմամբ մոռանա-
լը ուժերից բարձր էր: Այժմս, երբ թա-
գուհին յարութիւն առաւ և կորած դուս-
տրը գտնուեցաւ, Լէօնտը, առաջ այնպէս
չարաչար ասնջուողը, դժուարութեամբ տա-
րաւ այս խիստ փոփոխութիւնը դէպի ու-
րախութիւն... Ամեն կողմից անդում էին
բարեմախթութիւններ: Հրճուած ծնողները
չնորհակալութիւն յայտնեցին Փլօրիզելին
այն բանի համար, որ նա սիրեց իրենց
դստեր, երբ նա դեռ համարուում էր հա-
սարակ հովուի դուստր, որին, ի հարկէ, չը
մոռացան վարձատրել Պերդիտին փրկելու
համար: Կամիլլի և Պատլինի ուրախութիւ-
նը, որ իրենց հաւատարիմ ծառայութիւնը
պատկուեց այդպիսի յաջողութեամբ, սահ-
ման չունէր: Ի լրումն բոլորի ուրախութեան,
պալատ մտաւ ինքը Պալիկսէնը:

Պալիկսէնը, երբ լսեց Կամիլլի և իւր
որդու փախուստը, իսկոյն յիշեց, որ Կամիլ-

լը դեռ վաղուց կամենում էր վերադառնալ
Սիցիլիայ, դուշակելով, որ փախստականները
այնտեղ են ձանապարհուել, նա անյապաղ
հետևեց նրանց, և պատահեց այնպէս, որ
նա հասաւ հէնց Լէօնտի համար ամենաեր-
ջանիկ ըոպէին... Պալիկսէնը մասնակցեց
ընդհանուր ուրախութեանը, ներեց Լէօնտին
նրա անարդարացի կասկածի համար և նը-
րանք նորից սիրեցին միմեանց իրենց ման-
կութեան ամենաջերմ սիրով: Այժմս կարիք
չկար վախենալու, որ Պալիկսէնը արդելը
հանդիսանար իր որդու և Պերդիտի հար-
սանեաց, հովուհուց նա դարձաւ ժառանգ
Սիցիլիական թագին:

Այսպիսով էրմոնի երկար չարչարանը-
ները և բարութիւնը վարձատրուեցին: Այս,
ամենայն կողմից գեղեցկագոյն, կինը ապ-
րեց այնուհետև դարձեալ երկար տարիներ
Լէօնտի և Պերդիտի հետ, ինչպէս բախտա-
ւոր կին և մայր:



« Ազգային գրադարան



NL0171454

9886

2
1

807

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.